ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
"MKHITAR SEBASTATSI" EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064,Երևան.Ա.Բաբաջանյան 25 հեռ:74 11 12. 091 43 10 99. info@mskh.am www.mskh.am
25 A. Babadjanyan str., Yerevan, tel: (374 10) 74 11 12, (374 91) 43 10 99

13-06-263 01.06.2013թ.

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԻՆ
Պատճենը՝ ԿԳՆ ԿԱԻ ՏՆՕՐԵՆ ՆՈՐԱՅՐ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ
ԿԳՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

Մայիսի 29-ից հունիսի 14-ը կրթահամալիրի դպրոցներում գործում են հեղինակային կրթական ծրագրերի 2012-2013 ուստարվա ուսումնական պլաններով, կրթահամալիրի ուսումնական օրացույցով, սովորողների ուսումնառության պայմանագրերով որոշված ուսումնական ճամբարները, որոնց մասնակցում են կրթահամալիրի հանրակրթական դպրոցների 1-8-րդ, 10-11-րդ դասարանների, քոլեջի բոլոր սովորողները: Այդ ճամբարները բաց են, նրանցում արդեն, որպես լրացուցիչ կրթություն, սահմանված կարգով ընդգրկված են Երևանի հանրակրթական դպրոցների տարբեր տարիքի տասնյակ սովորողներ: Հունիսի 17-21-ին կազմակերպվում են սովորողների ուսումնական նախասիրությունների զարգացման ամառային ստուգատեսները: Մենք երկու օր առաջ Կրթության ազգային ինստիտուտի աշխատողի հեռախոսազանգով ենք տեղեկացել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգով հունիսի 3-18-ը ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ում և վերապատրաստման դպրոց-կենտրոններում կազմակերպվող սեմինարների և դրանց մեր 2013թ. ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնակցության մասին: Կրթահամալիրի դասավանդողները կա՛մ կարևոր գործառույթ ունեն Ձեր հրամանով հաստատված գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման մեջ, կա՛մ ուսումնա-հետազոտական ճամբարների, ջոկատների, ուսումնական ակումբների, ուսումնական նախագծերի ղեկավարներ են, ստուգատեսների պատասխանատուներ և հունիսի 3-14-ը չեն կարող այլ ծանրաբեռնվածություն ունենալ, քննությունների աշխատակարգով, ուսումնա-

հետազոտական ճամբարների կարգով, ռեժիմներով որոշված աշխատանքից բացի: Նրանք ժամը 9.00-ից մինչև 17.00 պատասխանատու են սովորող-ճամբարականների անվտանգության, ծրագրերի մշակման և իրականացման համար: Կրթահամալիրը Ձեր 15.05.2013 թ.607 Ա/Ք հրամանով ընդգրկված է ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող կազմակերպությունների ցանկում: Առաջարկում ենք թույլ տալ 2013թ. ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումը մեր միջոցներով կազմակերպել կրթահամալիրում: Կցում ենք կրթահամալիրի դասավանդողի մասնագիտական զարգացման աշխատանքի մասին տեղեկանք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ *ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ*

info@mskh.am

Տեղեկանք

Կրթահամալիրում ուսուցիչների վերապատրաստումները՝ որպես անընդհատ կրթություն, նախատեսված են հեղինակային կրթական ծրագրերով, դասավանդողի պաշտոնական հրահանգով, կրթահամալիրի ուսումնական օրացույցով՝ որպես մանկավարժական աշխատողների աշնանային, ձմեռային, գարնանային, ամառային դպրոցներ և ամենշաբաթյա սեմինարներ, որ 2012-2013 ուստարվա ընթացքում կազմակերպվել են ամեն երկուշաբթի՝ ժամը 15.15-16-15: Դրանց ծրագրերը և արդյունքները սահմանված կարգով հրապարակվում են mskh.am-ում:

Հունիսի 24-ին սկսվում է մանկավարժական աշխատողների ամառային հնգօրյա դպրոցը, որը բաց է հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար:

Կրթահամալիրի մանկավարժական աշխատողները տարին երեք անգամ՝ ՀՀ ԿԳՆ պատվերով կազմակերպվող ստեղծագործական մայիսյան և հոկտեմբերյան հավաքների, Հանրակրթական Դիջիթեքի ժամանակ հանդես են գալիս «Դպիր» էլեկտրոնային ամսագրում, տարբեր ծրագրերով անցկացնում են վերապատրաստումներ, իրականացնում են ինքնակրթություն և մեթոդական բնույթի այլ աշխատանքներ, որոնք ներկայացնում են իրենց բլոգներում:

Սահմանված կարգով յուրաքանչյուր ուսուցիչ իր տարեկան հաշվետվության մեջ ներկայացնում է իր վերապատրաստումների տեղեկանք: